№ 50 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 6 — 1901 — ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 6 № 50

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երբ պէտք է իրագործվը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անբերրիութիւնից վնասված գիւղացիների օգտին. Արձագանքներ. Բագուի հայոց Մարդասիրական ընկերութիւնը. Նամակ Ախալցխայից. Նամակ Մայկոպից, Նամակ Ասխարադից. Նամակ Նոր-Բայազէտից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Այդ օրը չատ էլ հեռու չէ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԵՐԲ ՊԷՏՔ Է ԻՐԱԳՈՐԾՎԻ

Պարսից գահաժառանգը, որ գտնվում է Թաւրիզում, տուել է հայերին մի ֆիրման, որով նա իր կողմից էս ամրապնդում է այն արտօնութիւնները, որ նրա Թագակիր հայրը շնորհել է պարսկահայերի դպրոցական գործի վերաբերութեամբ: Գահաժառանգը համակրում է հայերի մշակած դպրոցական ծրագրին և ցանկանում է նրան աջող իրագործութիւն:

Ինքը պարսից կառավարութիւնն էլ ներկայումս զբաղված է այն հարցով թէ ինչ միջոցներով բարձրացնէ պարսիկների կրթութեան գործը: Նա մտադիր է բանալ զանազան կարգի դպրոցներ թէ մայրաքաղաք Թէհրանում և թէ ուրիշ քաղաքներում: Մինիստրների և բարձր պաշտօնեաների շրջանում նկատելի կերպով աւելացել է այն անձանց թիւը, որոնք համակրում են եւրոպական կրթութեան և համոզվել են, որ նահապետական կարգերով ու հին փորձերի պաշարով անկարելի է այլ էս կառավարել Պարսկաստանը և նրա ապագան ապահովել անկումից: Անկասկած դեռ շատ կան Ֆանատիկոս և տգէտ մարդիկ, որոնք խորթ են նայում օտար կուլտուրայի ներմուծման և օտար ազդեցութիւնների աւելանալուն Պարսկաստանի մէջ: Բայց մխիթարական է և այն, որ կառավարչական շրջաններում գոնէ սկսել են գնահատել եւրոպական քաղաքակրթութեան բարիքները:

Այդպիսով հայերին տուած արտօնութիւնները համապատասխանում են այն համակրելի տրամադրութեան, որ ունեն ներկայումս պարսից կառավարչական շրջանները դէպի կրթական գործը ընդհանրապէս: Պարսկաստանը ցանկանում է ունենալ կրթված ու գիտութիւն ունեցող ժողովուրդ և կը ցանկանար, որ այդպէս լինէին և նրա հայ հպատակները, որոնք արդէն աջող փորձեր էլ են արել դպրոցական ասպարէզում:

Սակայն պարսկահայերը շատ դանդաղ են շարժվում և մինչև այժմ չէ իրագործվել ոչինչ գործնական կեանքում: Անկասկած՝ նրանք սպասում են աջակցողների, օժանդակողների, օգնողների և քաջալերողների: Եւ մենք ամենքս էլ կը ցանկայինք, որ սկսէին երևան գալ գործին նպաստողներ իրանց նիւթական միջոցներով: Բայց չը պէտք է նպաստողների յոյսով դանդաղեցնել գործի սկզբնաւորութիւնը: Փորձերը մեզ ցոյց են տալիս, որ սկված գործը՝ ամենալաւ քարոզն է և ամենաուժեղ կոչը համակրողներ գրաւելու դէպի ինքը: Այդ պատճառով անհրաժեշտ է, որ Թէհրանում և Թաւրիզում աշխատէին նոյն իսկ տեղական միջոցներով նոր դպրոցներ հիմնելու սկզբնական քայլերն անելու և գրաւէին ընդհանուրի ուշադրութիւնը անուրանալի փաստերով և իսկական գործունէութեամբ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԲԵՐՐԻՈՒԹԻՒՆԻՑ ՎՆԱՍՎԱԾ ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻ ՕԳՏԻՆ

—

Ստացանք Ախալքալաքի գաւառի գիւղացիների օգտին. 1) Միխայլովo կայարանից՝ Յարութիւն Փալանճեանից 10 բուբլի, 2) Բագուից՝ բժիշկ Ն. Տէր-Թովմասեանից 15 բուբ., Յովհաննէս Տէր-Միրաքեանից 5 բուբլի, Ն. Բարսեղեանից 24 բուբլի, Աստուր Շահիջանեանից 10 բուբլի:

Ընդամենը 64 բուբլի: Մինչեւ այժմ ստացել ենք 485 բուբլի:

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

XXXIX

Երբ հարցը իրանց ճակատի քրտինքով հաց աշխատողների մասին է, չը կայ այնպիսի մանրամասնութիւն, որ արժանի չը լինէր հրապարակախօսութեան ուշադրութեանը: Գուցէ այդպիսի մանրամասնութիւն համարվի այն, ինչի մասին ես խօսելու եմ այսօր:

Թիֆլիսի բաղնիսատէրերը մի սովորութիւն ունեն, որ չէ կարելի աշխատաւորների հարբատահարութիւն չը համարել: Նրանք ոչ միայն ոռճիկ չեն տալիս իրանց բաղնիքներում լողացողների պաշտօն կատարողներին, այլ եւ վերցնում են նրանցից այն փողերի մի մասը, որ յաճախողները տալիս են նրանց իբր «թէյադրամ»:

Ինչո՞ւ ենք հարստահարութիւն անուանում այդ սովորութիւնը: Ահա ինչու:

Երբ բաղնիս յաճախողները «թէյադրամ» են տալիս իրանց լողացնողներին, նրանք դրանով չեն գնահատում լողացնողների ամբողջ աշխատանքը, որովհետեւ կարծում են, թէ այդ աշխատաւորները ոռճիկ են ստանում բաղնիսատէրից, ուրեմն իրանք նրանց վարձատրութեան մի մասը արդէն վճարել են բաղնիսի մուտքի վճարի մէջ: Այդ պատճառով յաճախողները տալիս են համեմատաբար չնչին գումար: Հակառակ դէպքում, այսինքն եթէ նրանք համոզված լինէին, թէ այն, ինչ իրանք տալիս են աշխատաւորին, նրա միակ եկամուտն է լինելու եւ միակ ապրուստի միջոցը նրա ամբողջ ընտանիքի համար, անշուշտ նրանք աւելի առատաձեռն կը լինէին:

Ուրեմն հէնց այն, որ բաղնիսատէրերը ոռճիկ չեն տալիս աշխատաւորներին, այնպիսի մի հանգամանք է, որ հարստահարութեան բնաւորութիւն է կրում: Բայց այդ բաւական չէ: Բաղնիսատէրերը խլում են աշխատաւորների ձեռքից այն փողի մի մասը, որ ամենեւին իրանց չէր հասնելու, որովհետեւ ոչ ոք «թէյադրամ» տալիս ի նկատի չունի բաղնիսատէրին, իսկ եթէ իմանար, որ «թէյադրամ» տալու է ոչ միայն աշխատաւորին, այլ եւ բաղնիսատէրին, անշուշտ աւելի կը տար, այնպէս որ դարձեալ աշխատաւորի ձեռքում մի քիչ աւելի կը մնար:

Պարզ է, որ բաղնիսատէրերի մէջ ընդունված այդ սովորութիւնը անարդար է եւ անպատեւաբեր: Այդ զգում են, ինչպէս երեւում է, եւ իրանք բաղնիսատէրերը: Գոնէ մեր ունեցած տեղեկութիւններին նայելով, նրանցից մի քանիսը գրաւոր խոստում են տուել իրանց աշխատաւորներին այլ եւս չը պահանջել նրանցից այդ տուրքը:

Ի՞նչն է խանգարում բոլոր բաղնիսատէրերին հետեւել այդ համակրելի օրինակին: Մթթէ այն, ինչ անպատեւաբեր եւ անարդար է մի քանիսի վերաբերմամբ, անպատեւաբեր եւ անարդար չէ միւսների վերաբերմամբ:

Տ. Ց.

ԲԱԳՈՒԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

III

Ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը, ինչպէս երկրորդ անգամ որոշված էր, տեղի ունեցաւ փետրվարի 24-ին, նախագահութեամբ Բ. Դօլուխանեանցի: Ներկայ էին յիսունի չափ անդամներ եւ բաւականաչափ ունկնդիրներ երկու սեռից: Նախ քան վարչութեան գործունէութեան զեկուցագրի ընթերցումը, նախագահի առաջարկութեամբ, ժողովականները, ոտի կանգնելով, յայտնեցին իրանց յարգանքը հանգուցեալ Ե. Բուդաղեանցի յիշատակին՝ ընկերութեան 20,000 ր. նուիրած լինելու համար: Ապա տեղի ունեցաւ զեկուցագրի ընթերցումը, որի մասին հաժառօտ կերպով արդէն հաղորդված է «Մշակի» ընթերցողներին:

Բացի վարչութեան գործունէութեան զեկուցագրի ընթերցումից՝ տեղի ունեցաւ ընկերութեան «գրադարան-ընթերցարանի» հաշուետուութիւնը, որից երեւաց, որ առ 1-ն յունվարի 1901 թ-ի գրադարանն ունի 8189 գիրք 12609 հատորներով, արժողութեամբ 21,123 ր. 65 կ.: Այդ գրքերից 2196 հատոր հայերէն է, 6874 հատոր ռուսերէն, իսկ 45 հատոր ուրիշ լեզուներով: Պարբերական թերթեր՝ 357 հատոր հայերէն, 3021 հատոր ռուսերէն, իսկ 116 հատոր ուրիշ լեզուներով: 1900 թ-ի ընթացքում գրադարանն ունեցել է 1097 նոր բաժանորդ, որոնցից 848 տղամարդ, 249 կնամարդ: Ըստ ազգութեան, դրանք բաժանվում են՝ հայեր 421 կամ 38%, ռուսներ 392 կամ 36%, ուրիշ ազգերից 284 կամ 26%: Ինչպէս այդ տեղեկութիւններից ակնյայտնի երեւում է, ռուս եւ միւս օտարազգի բաժանորդները հաւասարեալ ոչ ոք կէս անգամ աւել են քան հայերը: Այդ բաժանորդներից առաջին տեղը բռնում են աշակերտներ, ապա մասնաւոր ծառայութեան մէջ գտնվողներ, վաճառականներ, արհեստաւորներ եւ այլն: Վերցրած գրքերի եւ ամսագիրների թիւը հասնում է 26224-ի, որոնցից ռուսերէն 24,191, հայերէն 1984, ուրիշ լեզուներով 49: Վերածելով ըստ բաժանմունքի, այդ 26224 գրքից 19,022-ը վերաբերում է վիպասանութեան, մնացածներից 2709 ամսագրեր, 935 պատմական-աշխարհագրական, ճանապարհորդական, 590 փիլիսոփայական, լեզուաբանական ու մանկավարժական եւ այլն: Ըստ հեղինակների, տրված ռուսերէն գրքերը բաժանվում են այսպէս՝ 447 անգամ Նեմիրովիչ-Դանչենկո, 341 անգամ Միխայլով, 263 անգամ Պոտապենկо, 252 անգամ Կրեստովսկի, 246 անգամ Սալիաս, 243 անգամ Լ. Տոլստոյ, 236 անգամ Սոլովեով, 151 անգամ Տուրգենեվ, 147 անգամ Դոստոեվսկի եւ այլն: Ուրիշ ազգերի հեղինակները՝ Ժիւլ-Վերն 246 անգամ, Զոլա 232 անգամ, Էժար 230 անգամ, Շպիլհագէն 214, Սենկեվիչ 213, Դոդէ 211, Դիւմա 208 Դիկենս 205 եւ այլն: Տրված հայերէն 1984 գրքերից շրջադարձ է եղել՝ Բաֆֆի 206 անգամ, Պռոշեանց 57, Շիրվանզադէ 44, Լէօ 31, Ծերենց 24, Աղայեան 21, Պատկանեան 16, Փափազեան 16, Պարոնեան 15, Շահազիզեան 14, Սունդուկեան 12, Տիւսաբ եւ Ատրպետ 10-ական, Աբովեան եւ Այվազեան 9-ական եւ այլն:

Ընթերցարանում ստացվել են պարբերական թերթեր 61 հատ, որոնցից 47 հատ ռուսերէն, 13 հատ հայերէն, 1 հատ ֆրանսերէն: Ընթերցարան յաճախողների թիւը եղել է մօտաւորապէս 22782, որոնցից հայեր 16676, ռուսներ 3436, ուրիշ ազգերից 2670: Յաճախորդների մէջ կանանց թիւը շատ չնչին տոկոս է կազմում: Ընդհանրապէս վերցրած թէ ընթերցարանը եւ թէ գրադարանը զգալի կերպով ծաղկում, զարգանում եւ ընդունելութիւն են գտնում. այդ են ապացուցանում գոնէ վերջին տարիների տեղեկութիւնները:

1898 թ. բաժանորդների թիւը եղել է 663, վերցրել են գրքեր 15410 էր: 1899 թ. բաժանորդների թիւը եղել է 888, վերցրել են գրքեր 20640: 1900 թ. բաժանորդների թիւը եղել է 1047, վերցրել են գրքեր 26224: 1898 թ. գրադարանում եղել է 7173 գիրք, 11029 հատորներով, արժողութեամբ 18708 ր. 14 կ.: 1900 թ. եղել է 8189 գիրք, 12609 հատորներով, 21123 ր. 65 կ. արժողութեամբ:

Ի լրումն այդ բոլորի պէտք է աւելացնել, որ գործի գլուխ է անցել բարձրագոյն կրթութիւն ունեցող գրադարանապետ, որ գիտակցաբար եւ բարեխղճօրէն վարում է իր ստանձնած գործը:

Գրադարան-ընթերցարանից յետոյ ընկերութեան ձեռնարկութիւնների մէջ երկրորդ տեղը բռնում է ձրի ճաշարանը, որը սկիզբն է առել անցած տարվայ ապրիլի 20-ից: Ճաշարանը կառավարել է կանանցից կազմված մի մասնաժողով: Ծախսվել է ճաշարանի վրա 2271 ր. 46 կոպ. ութ ամիս 10 օրվայ ընթացքում: Այդ ժամանակամիջոցում տրված է 31520 բաժին ճաշ: Միջին թիւով օրեկան տրվել է 123 բաժին ճաշ, արժողութեամբ 7,2 կոպ. իւրաքանչիւր ճաշը:

Փետրվարի 24-ին տեղի ունեցած նիստի շրջանակութիւնը յետաձգվեց հետեւեալ օրվան, կիրակի, փետրվարի 25-ին: Այդ նիստին հաստատվեց նախընթաց տարվայ եկեմուտքի հաշիւը եւ ներկայ 1901 թ. նախահաշիւը: Ըստ նախահաշիւի ծախս է նշանակված 26,300 բուբլի, որից 4950 բուբլի մշտական նպաստների՝ տան վարձի, սննդի համար, 4350 ր. միանուագ նպաստների՝ ճանապարհածախսի, ժամանակաւոր տան վարձի, սննդի, բժշկվելու, շորերի, թաղման եւ այլն եւ այլն, 5000 ր. գրադարան-ընթերցարանի համար, 3000 ր. ճաշարանի համար, 4000 ր. աշխատանքի տուն բաց անելու համար:

Նիստի վերջին տեղի ունեցան վարչութեան անդամների եւ վերաստուգող յանձնաժողովի լրացուցիչ ընտրութիւններ:

Աւելացնելով եւ նորընտիր անդամներին, Մարդասիրական ընկերութեան վարչութիւնը այս կազմն է ստանում՝ տիկին Եղիսաբէթ Սարգսեան, Սամսոն Յարութիւնեան, Ներ. Աբէլեան, Յովհ. Սաղաթելեան, Յովսէփ Խոնունց, Ն. Դաւթեան, Կ. Խատիսեան, Անուշ. Քալանթար եւ Աստ. Վաչեանց, փոխանորդներ՝ Յակ. Քօչարեան եւ Յովհ. Ամիրեան: Վերաստուգող յանձնաժողովը կազմում են՝ Կ. Եաղուբեան, Յակ. Խօջամիրեան եւ Ֆ. Մարդանեան:

Այդ նիստին, վարչութեան առաջարկութեան համաձայն, ընդհանուր ժողովը պատուաւոր անդամ ընտրեց պ. Աստուածատուր Կաճկաճեանցին, որ հիւանդութեան պատճառով հարկադրված է հրաժարվել վարչութեան անդամութիւնից:

Ն. Դաւթեան

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՑԻՑ

—

Փետրվարի 28-ին

Քաղաքիս ս. Փրկիչ եկեղեցու երէցփոխանական հարցը, քիչ դադար առնելուց յետոյ, այժմ կրկին սկսեց աւելի եւս բորբոքվել: Փետրվարի 21-ին, կօնսիստորիայի հրամանով տեղս ժամանեց նորընտիր լիազօր քննիչ Մ. քահ. Մելեանցը, եւ միւս օրը հոգեւոր կառավարութեան միջոցով ծխականների քննիչ մասնաժողովից պահանջեց երէցփոխական բոլոր մատեանները եւ քննութեան գործերը՝ միայնակ եւ վերստին քննելու համար: Սակայն քննիչ մասնաժողովը, այդ բանը զբաղելով հակառակ օրէնքի, մերժեց Մելեան քահանայի պահանջը...

Թէ ըստ նախնական աւանդութեան, թէ ըստ «պոլոժէնիայի» եւ թէ նոյն իսկ համաձայն յուլիսի 9-ին ծխականների ժողովով կազմած համախօսականի, քննիչ մասնաժողովը պարտաւոր է՝ մատեանները եւ իր քննութեան արդիւնքը յանձնել նախ ծխականների ժողովին, որը իր կողմից պիտի յանձնէ հոգեւոր իշխանութեան հայեցողութեան. իսկ նախքան այդ ժողովը, քննիչ մասնաժողովը անկարող է որ եւ իցէ սէկին թղթեր յանձնել: Այս պատճառով տեղի ունեցան Մելեան քահանայի եւ քննիչ մասնաժողովի մէջ թեր եւ դէմ խօսակցութիւններ եւ վիճաբանութիւններ: Միւս կողմից էլ ծխականները 101 ստորագրութեամբ մի խնդրագիր ուղարկեցին Թիֆլիս՝ Վեհափառ Կաթողիկոսին, որով, բողոքելով կօնսիստորիայի նոր լիազօր քննիչ ուղարկելու դէմ, խնդրում են յետ կանչել Մելեանցին եւ իրաւունք տալ, օրէնքի համաձայն, նախ ծխականների ժողով անել. այլապէս նրանք չեն ճանաչում հայր քննիչին: Բացի սրանից մի հեռագիր էլ նոյն անունով ուղարկեց քննիչ մասնաժողովը, որ յայտնում է,

թէ չէ կարող մատեանները յանձնել Մելեան քահանային, մինչեւ որ, համաձայն հաստատուած կանոնին, ծխականների ժողով չը գումարվի։

Ահա այս դրութեան մէջ է այժմ երէցփոխական գործը մեզանում։ Ժողովուրդը սաստիկ գրգռված է կոնսիստորիայի անկանոն կարգադրութիւնների դէմ, իր իրաւունքները բռնաբարված է տեսնում եւ իր կազմած հաստատուած կանոնները անտեսուած։

Ժողովուրդը սպասում էր, որ Վեհափառ Կաթողիկոսի կարգադրութեամբ շուտով յետ կը կոչվի լիազօր քննիչը եւ ծխականների ժողով կը նշանակվի. բայց իրողութիւնը ուրիշ բան ցոյց տուեց... Այսօր Կաթողիկոսի դիւանատնից մեր հոգեւոր կառավարութիւնը մի հեռագիր ստացաւ, որով Վեհափառը հրամայում է, որ անպայման ստանան ծխականների քննիչ մասնաժողովի ձեռքից երէցփոխական բոլոր մատեանները ու քննութեան գործերը եւ յանձնեն Մելեան քահանային միայնակ քննելու...

Սակայն նախ քան այդ հեռագիր ստանալը, Մելեան քահանան պայմանաւորվել էր քննիչ մասնաժողովի հետ եւ համաձայնութիւն կայացրել ստանալ քննիչ մասնաժողովի մատեանները եւ բոլոր քննութեան գործերը, այն պայմանով, որ բոլոր հարկաւոր դրութիւնների պատճէնները, հոգեւոր կառավարութեան վաւերացմամբ, վերցնէ քննիչ մասնաժողովը իր մօտ, եւ բացի դրանից Մելեան քահանան քննութիւնը կատարէ քննիչ մասնաժողովի նախագահ՝ պ. Յ. Մուրադեանի հետ միասին։ Թէ ինչպէս կը վերջանայ գործը, առ այժմ դրականապէս ոչինչ չենք կարող ասել, միայն Մելեան քահանան կիրակի, փետրվարի 25-ին, եկեղեցում ասած իր քարոզի մէջ յորդորեց եւ խոստացաւ ժողովրդին գործը քննել արդարութեամբ։

Ծխական

ՆԱՄԱԿ ՄԱՅԿՈՊԻՑ

—

Փետրվարի 15-ին

Մայկոպում բաւական թուով հայեր են ապրում, գաղթած զանազան տեղերից՝ գլխաւորապէս Հին-Նախիջեւանի գաւառից եւ Թիւրքիայից։ Մի քանի տարի սրանից առաջ՝ մայկոպցիները եկեղեցի ունենալու պահանջ են զգում եւ քաղաքից տեղ խնդրում։ Քաղաքային դուման, յարգելով հայերի խնդիրքը, 1895 թ. յունիսի 7-ի նիստում վճռում է յատկացնել հայոց եկեղեցու համար մի ընդարձակ կտոր հող (2,800 քառ. սաժ.) հին եւ նոր քաղաքամասերի սահմանագլխին, մի շատ յարմար եւ կենտրոնական տեղ։

Դումայի այդ որոշումը առաջարկվում է Կուբանի շրջանի կառավարչի հաստատութեանը, որը, ըստ երեւոյթին, չէ մերժում։ Հայերը շրջապատում են այդ տեղը ցանկապատով եւ սկսում են շինութեան համար քար ու աղիւս կրել։

1898 թ-ի յունիսի 25-ին մի քանի ձայնաւորներ գրաւոր դիմում են դումային եւ առաջարկում վերաքննել հայոց եկեղեցու տեղի հարցը եւ տալ հայերին մի ուրիշ տեղ։ Դուման իր 1899 թ-ի յունվարի 14-ի նիստում կրկին անգամ որոշում է թողնել վերոյիշեալ տեղը հայերին։ Ձայնաւորներից երկու հողի առանձին կարծիք են յայտնում, որը Կուբանի շրջանի կառավարչի կողմից թողնվում է առանց հետեւանքի։

1900 թ-ի մարտի 28-ին Կուբանի շրջանի կառավարիչը առաջարկում է քաղաքագլխին այդ հարցը նորից քննել դումայում եւ հայոց եկեղեցու համար յատկացնել մի ուրիշ տեղ։ Դուման, նոյն թուականի յունիսի 2-ին քննելով շրջանի կառավարչի առաջարկութիւնը, որոշում է յետաձգել վերջնական վճիռ կայացնելը, մինչեւ կը ստացվեն շրջանի կառավարչից հայոց եկեղեցու նախագիծը եւ թոյլտուութեան թղթերը։

Սեպտեմբերի 1-ին վերոյիշեալ թղթերը ստանալով, դուման նորից քննում է հարցը եւ գաղտնի քուէարկութեամբ (12 ձայն ընդդէմ 6-ի) որոշում է թողնել հայերին 1895 թ-ի յունիսի 7-ին կայացած նիստում յատկացրած տեղը։

Շրջանի կառավարիչը, չը համաձայնվելով դումայի այդ որոշման հետ, յանձնում է գործը Կուբանի շրջանական քաղաքային գործերին վերաբերեալ ատեանին, որը քննելով դումայի վերջին որոշումը՝ մերժում է այդ որոշումը։

Մայկոպի դուման, ստանալով վերոյիշեալ ատեանի այդ վճիռը, 1900 թ-ի դեկտեմբերի 15-ի նիստում որոշում է բողոքել կառավարչական սենատին այդ վճռի դէմ եւ լիազօրութիւն է տալիս քաղաքագլուխ պ. Իվանովին այդ գործը առաջ տանել։

Ինչպէս տեսնում էք, հարցը երկար է ձգձգվում։

Անցեալ աշնանը հայ հասարակութիւնը դիմում է Աստրախանի թեմի առաջնորդին եւ խնդրում մի կրթված քահանայ։ Արիստակէս սրբազանը յարգում է մայկոպցիների խնդիրքը եւ նշանակում Վահան քահ. Ասկարեանցին, որը սեպտեմբերի սկզբներին գալիս է Մայկոպ։

Վերջապէս մայկոպցիները ունենում են իրանց սեփական քահանան։ Վարձվում է մի տուն, ուր լինում է ժամերգութիւն բացի պատարագից։ Ասկարեան քահանայի գալուց յետոյ եկեղեցու շինութեան հարցը կրկին յարուցվում է եւ այժմ աւելի բուռն եռանդով։ Յունվարի 28-ին, առաւօտեան ժամերգութիւնից յետոյ, քահանան խնդրում է ժողովականներին չը հեռանալ, եւ այսպիսով կազմվում է մի բաւական բազմամարդ ժողով։ Առաջարկվեց եկեղեցու շինութեան հարցը։

Ծխականներից մի քանիսը առաջարկում էին կրկին անգամ դիմել քաղաքային դումային եւ խնդրել մի ուրիշ տեղ։ Միւսները առարկում էին, թէ չարժէ դիմել, որովհետեւ քաղաքը մի ուրիշ յարմար տեղ չունի. ազատ տեղերը քաղաքի կենտրոնից հեռու են եւ ուրեմն անյարմար եկեղեցու համար։ Աւելի լաւ է գնել տեղ եւ անմիջապէս ձեռնարկել եկեղեցու շինութեանը։

Այս վերջին առաջարկութեանը սկզբունքով բոլորը հաւանութիւն տուին, միայն մատնացոյց էին անում այն հանգամանքը, որ հասարակութիւնը այնքան էլ մեծ միջոցներ չունի, որ կարողանայ հաւ մի փոքր ի շատէ վայելուչ եկեղեցի կառուցանել, համ էլ տեղը գնել, որը առնուազը 2500 ր.—3000 ր. կարժենայ։

Այդ ժամանակ տեղից վերկացաւ աղօթատան երէցփոխ պ. Մակար Թերզեանը եւ առաջարկեց հասարակութեանը ընտրել եկեղեցու համար մի յարմար տեղ եւ խոստացաւ՝ ինչքան էլ որ լինի՝ իր հաշուով գնել այդ տեղը եւ նուիրել եկեղեցուն։ Ժողովականները յայտնեցին նրան իրանց անկեղծ շնորհակալութիւնը ու խոկոյն եւ եթ ցոյց տուին մի շատ յարմար տեղ, որ եւ վճռվեց գնել։

Այսպիսով վերջապէս, այսքան տարի ձգձգվելուց յետոյ, վճռվեց եկեղեցու շինութեան հարցը։ Ուրեմն մնում է ցանկալ մեր քահանային, երէցփոխին եւ Մայկոպի հայ հասարակութեանը եռանդ եւ աջողութիւն՝ այդ ցանկալի գործը, որքան կարելի է շուտով, գլուխ բերելու։

Զ.

ՆԱՄԱԿ ԱՍԽԱԲԱԴԻՑ

—

Փետրվարի 24-ին

Վերջերս ժամուլի մէջ երեւացող անընդհատ յորդորները՝ քահանաներին ոռճիկ սահմանելու անհրաժեշտութեան եւ նրա օգտակարութեան մասին՝ արձագանք են գտել նաեւ տեղիս հայ հասարակութեան մէջ, որը շատ համակրութեամբ է վերաբերվում այդ առաջարկութեանը։ Այս վերջին ժամանակներս, Թադէոս քահ. Ատովմեանի շնորհիւ, գտնվեցին մի քանի անձնաւորութիւններ, որոնք արդէն աշխատում են այդ գործը անպատճառ գլուխ բերել։ Հաղորդելով այս ուրախալի լուրը, մենք յոյս ունենք, որ մեր այդ ջերմ ցանկութիւնը կիրականանայ մօտ ապագայում։

Մեզ արդէն յայտնի է, թէ ինչ ձեւով պէտք է ծխականների վրա տուրք նշանակել։ Մենք վերցնում ենք Բաթումում գոյութիւն ունեցած ձեւը։

Ասխաբադում կան մօտ 400 տուն հայեր, որոնցից 300-ը (100 տունը չքաւոր ենք համարում) շատ հեշտութեամբ կարող է տեղիս երկու քահանաներին ապահով կացութեան մէջ դնել, տարեկան որոշ ոռճիկ սահմանելով նրանց։ Ցիշեալ 300 տուն ծուխը կարելի է բաժանել 5 դասակարգի, հետեւեալ ձեւով. 1) 20 տուն, իւրաքանչիւրը կարող է տալ 20 ր. տարեկան եւ կը ստացվի 400 ր., 2) 50 տուն, իւրաքանչիւրը 15 ր.=750 ր., 3) 100 տուն, իւրաքանչիւրը 10 ր.=1000 ր., 4) 70 տուն, իւրաքանչիւրը 5 ր.=350 ր., եւ 5) 60 տուն, իւրաքանչիւրը 3 ր.=180 ր.. ընդհանուր գումար ստացվում է՝ 2680 բուբլի։

Մեր աղօթատան բաղում (նախկին ուսումնարանում) եկեղեցուն վարձ տալով բնակվում են մեր երկու քահանաները. տալ իւրաքանչիւր քահանային տարեկան ոռճիկ 1200 ր. եւ ազատել տան վարձից—ահա այսպիսով կը ստեղծվի մի ապահով դրութիւն։

Ուրեմն երկու քահանաներին ոռճիկ տալուց յետոյ ընդհանուր գումարից մնում է դեռ եւս 280 ր., որը կարելի է գործադրել եկեղեցու այլ կարիքների համար։

Եւ եթէ իսկապէս իրականացաւ այս գեղեցիկ միտքը, այն ժամանակ միանգամից կը վերանան տեղիս քահանաների մէջ տեղի ունեցած անվերջ երկպառակութիւնները եւ երկու հակառակ կուսակցութեան բաժանված ժողովուրդն էլ, որի պատճառն էլ դարձեալ քահանայական խնդիրն է, կը միանայ, այլ եւս անկարող լինելով դանել իրար դէմ լարվելու մի որ եւ է պատրուակ։

Ց. Մ. Թումանեանց

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ

—

Փետրվարի 25-ին

Անցեալ տարվայ «Մշակի» № 119-ում նկարագրեցի մօտակայ Նորադուզ գիւղի տնտեսական դրութիւնը։ Սրանով էլ կամենում եմ մի քանի լրացուցիչ տեղեկութիւններ հաղորդել այդ նոյն գիւղի մասին, որ բաղկացած է մօտ 300 տուն զուտ լուսաւորչական հայերից։

Հակառակ անցեալ տարիների անարգասաւորութեան, այս տարի բնութիւնը քաղցրացել էր այդ գիւղականներին եւ հողագործական բաւարար արդիւնքով մոռացնել տուեց նրանց կրած վիշտը։ Հացահատիկների արդիւնքը յիրաւի պակաց ժողովրդի յոյսերը, որոնք այնքան ի դերեւ էին ելել նախկին տարիները։

Նորադուզի ժողովուրդը գաղթել է մեր կողմերը Թիւրքաց Հայաստանից 1828 թ-ի ռուս-թիւրքական պատերազմի միջոցին, գրեթէ միաժամանակ, երբ այստեղ են գաղթել նաեւ Նոր-Բայազէտի բնակիչները։ Գիւղում գտնվում է մի ընտանիք՝ «Սուրբ Նշանենց տունը», որտեղ պահվում են «Սրբ սուրբ Նշան» անունով մասունքները, որոնք կազմում են արծաթեայ խաչեր, աւետարան՝ արծաթեայ կազմով եւ սրբերի մասունքներ, թուով եօթ հատ։ Անյարմարութիւնը նրանումն է, որ այդ սրբազան մասերը տեղաւորված են մի փոքրիկ խցում, որի դուռը բացվում է գիւղական տան մէջ, որտեղ քնում են տան ընտանեւորները։ Այդ խցում առաստաղից բացված է մի փոքրիկ լուսամուտ, որտեղից ցերեկները օդն է միայն թափանցում եւ լուսաւորում խոնաւ սրբարանը, իսկ գիշերները ձէթի «կանթեղն» է պէտքն տալիս։

Թէ Նոր-Բայազէտից եւ թէ շրջակայ գիւղերից շատ ուխտաւորներ են գալիս «Սրբ սուրբ Նշանի» դուռը, ոմանք բժշկվելու, ոմանք իրանց մուրազին հասնելու, ուխտածները կատարած տեսնելու նպատակով։ Քանի քանի անգամ խօսք է բացվել, որ այդ մասունքները հանեն այդ մասնաւոր ընտանիքից եւ բերեն Նոր-Բայազէտի եկեղեցում դնեն։ Բայց այդ անկարելի է եղել, որովհետեւ այդ մասունքն հակառակել է ոչ միայն «սուրբ Նշանենց տունը», այլ եւ գիւղի հասարակութեան սեծամասնութիւնը։ Հէնց նախանցեալ տարի, ինչպէս լսեցի, տեղական գործակալի հրամանով կամեցել են զօռով բերել տալ այդ մասունքները Նոր-Բայազէտ, բայց գիւղի ժողովուրդը, մօտ 50 տուն, վրիժու՝ ցանկութիւն էր յայտնել դաւանափոխ լինելու (որքան յիշում եմ «Մշակում» յայտնված էր այդ մասին)։ Բայց այնուամենայնիւ նրանք յետ են կացել իրանց մտադրութիւնից, սակայն այն ժամանակ միայն, երբ կրկին թոյլ են տուել, որ «սուրբը Նշանը» մնայ իրանց գիւղում։ Ժողովուրդը պարծենում է նրանով, որ ինքը հազար ու մի չարչարանք կրելով հազիւ է կարողացել այդ սուրբ մասունքները ազատել թիւրքաց գերութիւնից եւ բերել այս կողմերը, հետեւապէս իր սեփականութիւնն է համարում։ Այդ է գուցէ պատճառը, որ Նորադուզի ժողովուրդը ոչ մի կերպով չէ համաձայնում բաժանվել այդ մասունքներից, չը նայելով որ ոչ մի նիւթական չօշափելի օգուտ էլ չունի նրանից, ինչպէս այդ կարծում են շատերը։ Սուրբ Նշանի ամբողջ եկամուտը տարվայ ընթացքում կազմում են մի քանի ջուխտ մոմեր, մի քանի մսխալ խունկ, որոնք վառվում եւ ծխվում են ս. Նշանի սիրոյ համար, քանի մի մատաղացու ոչխարներ, հաւեր, դառներ եւ այլն, որոնք մորթվելով նրա դուռը՝ բօղէապէս բաժանվում են թէ աղքատների եւ թէ իրանց, ուխտաւորների մէջ։ Իսկ ուրիշ, դրամական նուէրների թիւը հազիւ թէ անցնի մի քանի կօպէկներից։ Սակայն, ի դժբախտութիւն ուխտաւորների, վերջերս վախճանվել է «Ս. Նշանի» իսկական սեփականատէրը՝ Մուղդուսին, որը բոլոր ուխտաւորների համար միշտ եւ ամեն ժամանակ անուշ ձայնով երգում էր «Տէր-ողորմեան» եւ իր տան հացից նրանց իբր «նշխար» բաժանում։

Ս. Նշան ուխտատեղին իսկապէս պարծանք է համարվում յիշեալ Նորադուզ գիւղի համար շատ տարիներից ի վեր։ Թողնենք, ուրեմն, ընթերցողը, որ այդ գիւղի բնակիչներն էլ աւելի երկար ժամանակով պարծենան իրանց այդ ազգային—կրօնական սրբութիւններով, առանց դիպչելու նրանց կրօնական զգացմունքին, որ շատ գիւղականների կեանքի յենակէտն է համարվում...

Կ—ն

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Մօսկվա, փետրվարի 21-ին

Խնդրում ենք «Մշակի» մէջ տեղ տաք հետեւեալ զեկուցմանը։

Ահա արդէն երկու տարի է, որ Մօսկվայի հայ հասարակութեան մեծ մասը եւ ամբողջ հայ ուսանողութիւնը յուզված են այն ամբաստանութիւնով, որը բարձել էին տիկին Դիւլպենտճիի վրա նախ պ. Թումեան եւ ապա պ. Ե. Թաղիանոսեան։ Տիկին Դիւլպենտճին ամբաստանվում էր նրանում, որ 1898 թ. «Հայկական երեկոյթի» ժամանակ «հաչիները դիտամբ խառնել էր եւ սեփականացրել հասարակական փողեր»։

Այս գործը պարզելու համար 1900 թ. դեկտեմբերի 17-ին կազմվեց միջնորդ դատարան, որը ներկայ փետրվարի 13-ին կայացրեց իր վճիռը։ Առաջ ենք բերում բառ առ բառ վճռի պատճէնը.

«Ներկայ փետրվարի 13-ին՝ տ. Մ. Դիւլպենտճիի եւ պ. Ե. Թաղիանոսեանի վերաբերմամբ կազմված միջնորդ դատարանը (նախագահութեամբ երդուեալ հաւատարմատար պ. Ա. Ցակոբեանի եւ անդամակցութեամբ պ.պ. Վ. Լունկեվիչի, Ս. Էյրանեանի, բժ. Կ. Վլասեանի եւ Գ. Բուրջալեանի), կայացրեց հետեւեալ վճիռը. անհիմն համարելով պ. Ե. Թաղիանոսեանի տ. Մ. Դիւլպենտճիի դէմ յարուցած ամբաստանութիւնը, որ իբր թէ վերջինը սեփականացրել էր հնասարակական փողեր, միջնորդ դատարանը համարում է տ. Դիւլպենտճիին արդարացած. ի նկատ առնելով, որ բոլոր հանգամանքները մանրակրկիտ քննելուց յետոյ, նրա վարմունքի մէջ չէ նկատվում ոչինչ, որ կարող էր առիթ տալ նրա վրա այդ տեսակ ծանր մեղադրանք բարձելուն, մի եւ նոյն ժամանակ երբ յանդիմանութիւնները պէտք է լինէին միմիայն երեկոյթի գլխաւոր դանձապահ պ. Թումեանին, որը թոյլ էր տուել զանազան անկարգութիւններ ու զանցառութիւններ կասսայի վերաբերմամբ. աչքի առաջ ունենալով բոլոր յաճախակի ծառայութիւնները տ. Դիւլպենտճիի կողմից հայ հասարակութեանը եւ ուսանողութեանը,—դատարանը համարում է մեղադրանքն էլ վերին աստիճանի անբարեխիղճ, իսկ մեղադրողին պարտաւորեցնում է հրապարակապէս ներողութիւն խնդրել տ. Մ. Դիւլպենտճիից»։ Նախագահ՝ Ա. Ցակոբեան։ Դատաւորներ՝ Կ. Վլասեան, Գ. Բուրջալեան։

Դատաւորներից պ.պ. Էյրանեան եւ Լունկեվիչ (որոնք պ. Թաղիանոսեանի կողմից էին) յայտնել են առանձին կարծիքներ։

Պ. Էյրանեանի կարծիքը. «համարում եմ տ. Դիւլպենտճիին անմեղ հաչիները դիտամբ խառնելու եւ հասարակական փողեր սեփականացնելու մէջ 1898 թ-ի «Հայկական երեկոյթին». իսկ ներկայ գործի ծագումը բացատրում եմ երեկոյթի ժամանակ թոյլ տուած անկարգութիւններով»։

Պ. Լունկեվիչի կարծիքը. «Անհնարին եմ համարում վճռականապէս կարծիք յայտնել տ. Դիւլպենտճիի անմեղութեան կամ մեղաւորութեան մասին. իսկ ինչ վերաբերում է ամբաստանութեան չարամտութեանը, ես այդ հարցում խիստ կերպով տարբերվում եմ միւս երեք դատաւորների վճռից, որովհետեւ պ. Ե. Թաղիանոսեան՝ համաձայն իր յայտարարութեան դատարանի առաջ՝ սկսելով ուրիշների հետ իր բողոքը 1898 թ. երեկոյթին թոյլ տուած զեղծումների դէմ, ձեռքի տակ ունէր վկայագրեր, որոնց օգնութեամբ նա յոյս ունէր լիովին ապացուցել յանցանքը, սակայն այդ նոյն իսկ վկայագրերը, մեղադրողի ասելով, անհետացել են անկախ իր կամքից»։

Երկու կողմից էլ՝ թէ ամբաստանող եւ թէ ամբաստանված, նախ քան դատը սկսելը, ստորագրութիւն են տուել հպատակվել դատարանի վճռին։

Ուսանողներ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կիրակի, մարտի 4-ին, Թիֆլիսի միջնակարգ դպրոցներից մի քանիսի եկեղեցիներում կատարվեցին հոգեհանգիստներ ժողովրդական լուսաւորութեան մինիստր Բոգոլէպովի յիշատակին։ Հոգեհանգիստների ժամանակ ներկայ էին, բացի աշակերտներից եւ ուսուցչական խմբից, նաեւ բարձրաստիճան անձինք։

—

Ներկայ 1901 թուականին Անդրկովկասի քաղաքները եւ աւանները պէտք է իրանց անշարժ գոյքերի համար տուրք վճարեն հետե-

ւեալ չափով. Թիֆլիսի նահանգը 134,000, Երևանեան 29,000, Քութայիսի 63,000, Գանձակի 29,000, Բագուի 104,000, Կարսի 7,000, Դաղըստանի 10,000, Զերնօմօրեան 6,000 եւ Զաքաթալի շրջանը 800 ռուբլի։

—

Մեզ խնդրում են տպել հետեւեալը. «Կիրակի, մարտի 4-ին, Թիֆլիսի եկեղեցիներից մէկում կար մի հանգուցեալ, Անտոն Դատայեան անունով։ Թաղման հրաւիրված էին չորս քահանայ, սակայն պատարագը վերջանալուց յետոյ այդ չորսից ոչ մէկն էլ չը կար, որ դագաղը կարելի լինէր վերցնել։ Բանից դուրս եկաւ, որ այդ տէրտէրները նոյն օրը ուրիշ, աւելի հարուստ մեռել էլ ունէին թաղելու։ Առաջ նրա յետեւիցն էին գնացել, յետոյ կէս ճանապարհից վերադարձել աւելի աղքատ մեռելին յուղարկաւորելու»։

—

Երկու հարիւր ընտանիք Բեսսարաբիայի Նահանգի Օրգիեվ գաւառից, ինչպէս հաղորդում են լրագիրները, ցանկութիւն են յայտնել դաղթելու Կովկաս։

—

Թիֆլիսի քաղաքային խորհուրդը վճռել է երկրորդ յարկ աւելցնել այն քաղաքային տան վրա, որ գտնվում է Աւէքսանդրեան այգում։ Այս նոր չինվելիք յարկում պէտք է բացվի քաղաքային գրադարան-ընթերցարան յանուն Պուշկինի։ Շինութեան նախագիծը արդէն կազմված է եւ ծախս նշանակած 8,400 ռուբլի։

—

Ներքին գործերի մինիստրութեան մէջ այժմ հերթական հարցերի կարգն է անցկացրած Կուբանի, Թերեքի եւ Դոնի շրջանների մի քանի քաղաքները զինուորական մինիստրութեան իրաւասութիւնից ներքին գործերի մինիստրութեանը յանձնելու խնդիրը։

—

Ներքին գործերի մինիստրութիւնը յայտնել է Պետերբուրգի քաղաքային խորհրդին, որ ինքը համաձայն է պայմանագիր կապել խորհրդի հետ եւ իր վրա առնել մայրաքաղաքի հեռախօսի շահագործութիւնը։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Կարօտ գիւղացիներին օգնող այստեղի կօմիտէը հեռագիր ստացաւ Թիֆլիսի պ. Նահանգապետից, թէ գլխաւոր կօմիտէը որոշել է գիւղացիների համար ձեռք բերել, իբրեւ սերմացու, 100 սօտար կտաւատ եւ 1500 պուդ գետնախնձոր, որ փոխարինաբար պէտք է բաժանվի կարօտ գիւղացիներին այն պայմանով, որ ստացած բերքից վերադարձնվի սերմը։ Կտաւատը եւ գետնախնձորը պէտք է առնվեն մինչեւ փետրվարի 24-ը գոյութիւն ունեցած գներով, որի համար փոխադրված է 3000 ռուբլի։ Այստեղի կօմիտէը մտադիր է կտաւատի մի մասը այստեղ առնել, իսկ մնացածը՝ Ալէքսանդրօպոլի գաւառից բերել տալ։ Գետնախնձորը կառնվի կամ դուխօբօրներից, կամ Ախալցխայի գաւառի Դամալա գիւղից»։

—

ԱՐՄԱՒԻՐԻՑ մեզ գրում են. «Բագուի հայ դերասանական խումբը տեղիս ժողովարանում փետրվարի 22-ին ներկայացրեց «Օթէլլո»։ Պիէսը գրաւել էր բաւական հասարակութիւն. կային եւ ռուսներ։ Պ. Աբէլեան աչքի էր ընկնում իր զգացված խաղով եւ արժանացաւ բուռն ծափահարութեան։ Միւս դերակատարներից լաւ էին օր. Վարդիթերը Դեզդէմօնայի դերում եւ պ. Ստեփանեանը Եագոյի դերում։ Փչացրեց իր դերը տ. Փառանձեմը (Էմիլիա), մանաւանդ վերջին գործողութեան մէջ։ Ամսիս 24-ին, պ. Աբէլեանի բենեֆիսին, ներկայացրին «Անմեղ-մեղաւորներ»։ Ընդհանուր առմամբ բոլոր դերակատարները լաւ էին։ Վերջին տեսարանում հանդիսականներից շատերը լաց էին լինում։ «Սիրահարը սեղանի տակ» վոդեվիլի մէջ բացի Մարի-Հրանոյշից բոլորն էլ փչացրին իրանց դերերը։ Գովում ենք դերակատարներին, որոնք բաւական անաղող շարադրում էին իրանցից խօսքեր։ Դա ինչի՞ նշան է... Հասարակութիւնը իր չնորհակալութիւնը յայտնեց մի քանի ընծաներով պ. Աբէլեանին եւ օր. Մարի-Հրանոյշին։ Պ. Աբէլեանը խոստացաւ Զատկից յետոյ կրկին այցելել մեր աւանը»։

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Ավաջուղ գիւղից Աբդուլ Հալիմը նշանվում է իր համագիւղացի Գեօղալ Սօլթան-Ահմէդ Ղըզու հետ։ Այդ բանին հակառակ է լինում աւաջուղցի Հաջի Քէրիմ Շեխ Քէրիմ օղլին, որը մի քանի անգամ առաջարկութիւն է արել—Գեօղալի ձեռքն է խնդրել, բայց միշտ մերժում է ստացել։ Զայրանալով այդ բանի վրա՝ Հաջի Քէրիմը անցեալ տարվայ ապրիլի 3-ին գիշերով, իր եղբօր Շեխ Բահիմի եւ սրա ազգական՝ Զահիր Բէդիր օղլու հետ, զինված մտնում է աղջկայ տունը. կոտրելով տան դռները։ Զարագործները ներս են խուժում եւ գտնում են անկողնում քնած սիրուն աղջկան՝ Գեօղալին, սրա եղբօրը՝ Զիլեանդարին եւ սրանց մօրը՝ Սաֆիա Աղան ղըզուն։ Ապշած, արթնացած ընտանիքը անզօր կերպով դիմադրում է անկոչ հիւրերին, բայց իզուր, ոչինչ չէ աջողվում անել սրերը հանած չարագործներին։ Հաջի Քէրիմը վերցնում է իր զոհին՝ Գեօղալին եւ թեւի տակ փախցնում է նրան. հասնում են անտառը, ուր Հաջի Քէրիմը Գեօղալին բռնաբարում է։ Միւս օրը չարագործներին բռնում է եւ կալանաւորում է Բէդիշ-կալա գիւղում։ Քօվնա Խուդաթի տանուտէր՝ Գիւլ Մամէդ Հաջի Նուրալի օղլին, որը նրանց ետեւիցն է ընկնում մարդկանցով՝ երբ իմանում է այդ գործի եղելութիւնը հարայ հրոց գցող Գեօղալի մօր եւ եղբօր ուղարկած մարդկանցից։ Գեօղալի մարմնի եւ ուսերի վրա գտնում են կապտագոյն բծեր, նշաններ։ Բագուի նահանգական դատարանի այստեղի բաժինը փետրվարի 26-ին այդ գործի քննութիւնն էր նշանակել. մեղադրված Հաջի Քէրիմին դատարանը դատապարտեց վեց տարով, իսկ մնացածներին՝ մի մի տարով բանտարկութեան։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՃԴ ՕՐԸ ՇԱՏ ԷԼ ՀԵՌՈՒ ՉԷ

Վեհափառ Կաթողիկոսի նոր կարգադրութեան համաձայն՝ Ատրպատականի թեմը պէտք է ընտրէ իր առաջնորդին։ Եթէ այդ իրաւունքը ամբողջ թեմին է պատկանում, ուրեմն ընտրութեան մասնակցելու են.

Թաւրիզ իր 3 գիւղերով, Ուրմի 28, Մարազա 2, Խոյ 7, Մակու 4, Արդաբիլը, Սալմաստի 26 գիւղերը, Ղարադաղի 27, Բարանդուզի 10, Սօլդուզի 9, Սօվուղ Բուլաղի 4 եւ Միանդաբի 3 գիւղերը։

Այս ուրախառիթ լուրը «Մշակում» կարդալուց յետոյ, ես չտապեցի աւետել իմ ծանօթիս, որ պարսկաստանցի է, ծանօթ՝ բոլոր պարսկահայերի վիճակին։ Սակայն նա հակառակ սպասածիս շատ սառն վերաբերվեց դէպի այդ լուրը եւ պատասխանեց.

—Ի՞նչ ուրախանալու բան կայ. եթէ Կաթողիկոսին մնար այդ իրաւունքը, աւելի լաւ կը լինէր։

—Ինչո՞ւ, հարցրի ես զարմացած։

—Որովհետեւ Սօլդուզի, Սալմաստի, նոյն իսկ Թաւրիզի ժողովուրդը իր այդ իրաւունքից օգտվել չէ կարող։ Այդ կարգադրութիւնը մեր աղաների առաջ նոր, ընդարձակ ասպարէզ է բաց անում։ Գաւառացին իրան տրված այդ իրաւունքի մասին դաղափար չունի. նա չնորհիւ իր ստրկամտութեան եւ տգիտութեան երկու ձայն էլ պիտի աւելացնէ Թաւրիզեցի աղաների կամայականութիւնը զօրեղացնելու համար։ Իսկ այդ անխիղճ աղաները ժողովրդի անունով՝ միայն իրանց անձնական հաճոյքներին եւ կրքերին են բաւականութիւն տալիս։

Եւ իրբեւ փաստ բերեց հետեւեալը.

Ներկայ առաջնորդ Այվազեան եպիսկոպոսը ինչպէս Թէհրանում, նոյնպէս եւ Ատրպատականում հարիւրաւոր շօշափելի փաստերով ապացուցել է, որ իր ժողովրդին նուիրված, լուսամիտ, եռանդուն հովիւ է. իսկ երբ Թաւրիզ մտնելիս նա ստոր արհամարհանք ցոյց տուաց դէպի Թաւրիզեցի աղաների հեղինակութիւնը եւ դրա փոխարէն իր բացարձակ համակրանքը ցոյց տուաց նոր սերնդի գաղափարական ներկայացուցիչներին, հէնց սկզբից եւ եթ հալածանքի ենթարկվեց։ Աղաները ամեն տեսակ անաղնիւ, ստոր, քսու միջոցներ գործ դրին նրա ոյժը ջլատելու, նրա վարկը գցելու Կաթողիկոսի, ժողովրդի, նոյն իսկ կառավարութեան պաշտօնեաների եւ օտար հիւպատոսների առաջ... Նրանք չը խղճահարվեցին մինչեւ անգամ Թիֆլիսի մի փողոցային թերթի էջերը հրապարակային զրպարտութիւններով զարդարելու։ Ահա այդպիսի ստոր արարածներին է պատկանում ժողովրդի իրաւունքը։

Եւ նա առանց ընդհատելու շարունակեց.

—Չէ որ 1894 թւին էլ թեմը պատգամաւոր ուղարկեց էջմիածին եւ պատգամաւորներն ընտրեցին իրանց առաջնորդին, ո՛ւմ եւ ինչպէս ընտրեցին։

Իմ հարցիս, թէ ո՞վքեր էին պատգամաւորները եւ ինչպէս ընտրեցին, նա պատմեց հետեւեալ ծիծաղաշարժ, բայց դառն իրողութիւնը։

—Պատգամաւորները աղաներ էին. նրանք վանքի բակում զբօսնելիս տեսնում են հսկայ մարմնով, սպիտակ եւ երկար մօրուքով, իրօխտ դէմքով մի եպիսկոպոս, որ իր սենեակից ծանրաքայլ դուրս էր գալիս։ Նրանք մօտենում են միմեանց եւ փսփսում են. ո՞վ է սա, ո՞վ է, անունն ինչ է. պատասխանը լինում է—Սուքիաս եպիսկոպոս։—Հէնց սա է, որ կայ, սրանից էլ յարմարը չը կայ—վճռում են եւ նրան էլ ընտրում են...

Այդ ժամանակ մեզ մօտ եկան ուրիշ մարդիկ եւ մեր խօսակցութիւնը փոխվեց։ Ես հեռացայ ծանօթիս տուած փաստերի ծանր տպաւորութեան տակ։ Իսկապէս դառն իրականութիւնը այդ է ցոյց տալիս. տգէտ, խաւարի մէջ թաղված ստրպատականցին ներկայ պայմաններում իր իրաւունքից օգտվել չէ կարող, նա իր «աղաների», «փչխանների» ստրուկն է։

Բայց այդ դրութիւնը յարատեւ չէ կարող լինել։ Կասկածել անգամ հարկաւոր չէ, որ վաղ թէ ուշ ժողովրդի «աչքը պիտի բացվի», նրա միտքը պիտի լուսաւորվի, նա սեփական դատողութեան տէր պիտի դառնայ։ Եւ ահա այդ ժամանակ նա իր իրաւունքը պաշտպանելու համար աղայականութիւնը մի ապտակով ասպարէզից պիտի քշէ։ Հարիւրաւորներից բերեմ մի շատ համոզիչ փաստ։

Ատրպատականին տրված իրաւունքը սրանից 40 տարի առաջ Թիւրքահայերին տրվեց, բայց մինչեւ 80-ական Թւականները, հեռաւոր, խուլ ու մութ գաւառներից մէկը չէր կարող օգտվել իր այդ իրաւունքից, աղաները «իրենք կը զարնէին, իրենք ալ կը խաղային», մինչեւ որ գաւառական դպրոցները սկսեցին շատ թէ քիչ ժողովրդի միտքը լուսաւորել։ 1886 թւին պէտք է լինէր առաջնորդական ընտրութիւն։ Ժողովուրդը երկու կուսակցութեան բաժանվեց. աղաների կուսակցութիւն, որին աջակից էին փող, դաւ, բռնութիւն եւ իր տխրահռչակ թեկնածուն, միւսը երիտասարդների կուսակցութիւնն էր, որին աջակից էին ինքնագիտակցութիւնից բղխած մաքուր ոգեւորութիւնը եւ ժողովուրդը։ Գաւառական քաղաքի եկեղեցիները, հրապարակները լի էին խուռն բազմութեամբ. ամբողջ քաղաքը յուզված ծփում էր։ «Թող կորչին աղաները, դաւաճանները» գոչում էր ժողովուրդը։ «Ձերբակալել ըմբոստներին», հրամայում էր կարգ պահպանելու համար բերված զինուորներին աղաների խոշոր թեկնածուն։ Եւ իրաւ, թէեւ այդ օրը մի քանի երիտասարդներ բռնտ ժան, աքսորվեցին, հալածանքի ենթարկվեցին, բայց ժողովուրդը յաղթանակ տարաւ։ Աղայականութիւնը տապալվեց եւ դրանից յետոյ ժողովուրդը իր իրաւունքի տէրը դարձաւ։

Մինչ այս փաստը միայն բաւական չէ մեզ համոզելու համար, որ վաղ թէ ուշ ատրպատականցիներն՝ էլ պիտի լուսաւորվեն եւ ժողովրդի տգիտութիւնից օգտվող աղաները իրանց գործած չարիքների փոխարէն խիստ ապտակի պիտի արժանանան։

Մենք համոզված ենք եւ կարծում ենք, որ այդ օրը շատ էլ հեռու չէ...

Շ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—New-York-Herald» հաւատացնում է, թէ Զինաստանը ներկայացրել է մեծ պետութիւններին այն պայմանագրութեան պատճէնը, որ Ռուսաստանի կողմից առաջարկված է նրան ստորագրելու։ Պետութիւնները, պայմանագրութեան հետ ծանօթանալուց յետոյ՝ նրա մէջ առաջ բերված կէտերը շատ լուրջ դտնելով, պահանջեցին, որ Զինաստանը չը ստորագրէ պայմանագիրը, մինչեւ որ իրանք կարծիքներ փոխանակեն միմեանց մէջ այդ հարցի վերաբերմամբ։ Զինական կառավարութիւնը համաձայնվեց սպասել երկու շաբաթ։

—Վերջին ժամանակ գերմանական լրագիրները աշխատում էին հաւատացնել, թէ Ֆրանսիան կուլտուրականապէս եւ անտեսականապէս դիմում է դէպի անկումն։ Վերջին վիճակագրական տեղեկութիւնները Ֆրանսիական ազգային հարստութեան մասին հերքում են գերմանական լրագիրների այդ կարծիքը։ Ֆրանսիական ազգի ընդհանրութեան հարստութիւնը գնահատվում է այժմ 225 միլիարդ ֆրանկ, որոնցից 110 միլիարդ արժեն անշարժ կայքերը, իսկ 115 միլիարդ ամեն տեսակի շարժական գոյքերը։ 1900 թւի յունվարի 1-ին Ֆրանսիայի ազգաբնակութիւնը բաղկացած էր 38,623,000 մարդուց. նրա տարեկան եկամուտը 1900 թւին հասաւ 25 միլիարդ ֆրանկի, որ ստացվում է հետեւեալ աղբիւրներից.—հողային սեփականութիւնից՝ 2,400 միլիոն, քաղաքային անշարժ կայքերից՝ 2,600 միլիոն, դրամագլուխներից՝ 4,000 միլիոն, բանուորների աշխատանքից՝ 10,500 միլիոն, առեւտրական եւ արդիւնագործական ձեռնարկութիւններից՝ 3,500 միլիոն եւ պաշտօնական ու ազատ արհեստներով պարապող անձերի եկամուտներից՝ 2,000 միլիոն։ 1901 թւականի յունվարի 1-ին Ֆրանսիայում կային 545 խնայողական դրամարկղներ, որոնք 1900 թւականի ընթացքում տուել են 6,877,057 գրքոյկներ 3,427,464 ֆրանկ գումարի։

—Կ. Պոլսից հեռագրում են «Berliner Tageblatt» լրագրին. «Ռուսաց դեսպան Զինովիեվ հաղորդեց Բ. Դրանը, թէ բուխարական էմիրը դեսպանութեան միջոցով ուղարկել է 160,000 ռուբլի յօգուտ Դամասկոս-Մեկկա երկաթուղային գծի շինութեան։

—«Новости» լրագիրը հաղորդում է, թէ Սօֆիայի մակեդոնական կօմիտէը շրջաբերական թուղթ է ուղարկել բոլոր գաւառական կօմիտէներին, որով մարտի 31-ին արտակարգ ժողովի է հրաւիրում առանձին կօմիտէների բոլոր ներկայացուցիչներին։

—Բուդա-Պեշտից հեռագրում են «Neue Freie Presse» լրագրին. «Հէնց այն օրը, երբ իտալական նոր մինիստրութիւնը բացատրում էր իր ծրագիրը պարլամէնտին եւ յայտարարում էր, թէ Իտալիան հաւատարիմ կը մնայ այժմ գոյութիւն ունեցող պայմանագրութիւններին, ունգարական «Egyeterter» լրագիրը տպագրեց մի դիւանագիտական հաղորդագրութիւն, որ ուղարկված էր Վիէննայի արտաքին գործերի մինիստրութեան հետ սերտ յարաբերութիւն ունեցող մի քաղաքագէտից։ Այդ հաղորդագրութեան մէջ դրականապէս յայտարարվում է, թէ երեքպետեան դաշնակցութիւնը, որի ժամանակամիջոցը լրանում է 1903 թւականի մայիսի 6-ին, չի վերանորոգվի այն ձեւով, ինչ ձեւով նա գոյութիւն ունէր մինչեւ այժմ։ Երեքպետեան դաշնակցութեան կազմը կը փոխվի. Իտալիայի տեղը կը բռնէ Անգլիան, իսկ Իտալիան կը միանայ Ֆրանս-ռուսական դաշնակցութեան։ Ունգարական լրագրի թղթակիցը Իտալիայի ցանկութիւնը դուրս գալու երեքպետեան դաշնակցութիւնից բացատրում Վիկտոր-Էմմանուէլ թագաւորի եւ նրա ամուսնու անձնական հակումներով։ Ֆրանսիական դիւանագիտութիւնն եւս իր կողմից ամեն ջանք գործ է դրել այդ բանը աջողեցնելու համար եւ այն, ինչ որ չաջողվեց նրան Ումբերտօ թագաւորի օրով, հնարաւոր եղաւ իրագործել նոր թագաւորի ժամանակ։

—Մի քանի գերմանական լրագիրներ, որոնց թւում եւ «Hamburg. Nachr.» կասկած են յայտնում, որ Վէյլանդ յիրաւի լինի այն, ինչ որ ինքը եւ ուրիշները կամենում են ցոյց տալ, այսինքն խելագար եւ ոչ քաղաքական յանցաւոր։ Այն դէպքում, եթէ վերջին ենթադրութիւնը ճիշտ լինի, կառավարութիւնը հարկադրված կը լինի դիմել, գոնէ ժամանակաւորապէս, եռանդուն միջոցների «յեղափոխական կուսակցութիւնների դէմ», որպէս զի չը մեղադրեն նրան թուլութեան եւ անվճռողականութեան մէջ։ Պարզ է, որ Բերլինի զեկավարող շրջաններին վերին աստիճանի անհաճոյ կը լինի, եթէ բացվի, որ Վէյլանդ անարիսխատ է կամ սօցիալ-դէմօկրատ։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

3 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մարտի 3-ին համալսարանում, կանանց բժշկական ինստիտուտում եւ արական ու իգական գիմնազիաներում հոգեհանգիստներ կատարվեցին ժողովրդական լուսաւորութեան հանգուցեալ մինիստրի համար։

ԼՕՆԴՕՆ։ Հաժանքների ժողովը ընդունեց զօրքերի ընդհանուր թւի եւ այդ թւի աւելացման համար անհրաժեշտ ծախսերի նախագիծը Բրոդրիկի ծրագրի համաձայն։ Նախագծի քննութիւնը յետաձգվեց ապագային։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Միացեալ-Նահանգները պաշտօնապէս, թէեւ անուղղակի կերպով, ճանաչեցին հարաւաֆրիկական երկու հանրապետութիւնների միացումը Անգլիայի հետ. այդ բանը մտցրած է Միացեալ-Նահանգների արտաքին առեւտրի տեսութեան մէջ, որ հրատարակում է արտաքին գործերի մինիստրութիւնը։

ԼՕՆԴՕՆ։ Կիտչէնէր հաղորդում է Պրէտորիայից, թէ գնդապետ Պարկէրի զօրաբաժինը յանկարծակի վրա հասաւ Կրիւգէրսդօրպի մօտ բանակ դրած բօէրներին եւ գրաւեց բանակը, սպանելով մի բօէրի, վիրաւորելով հինգին եւ գերի վերցնելով 32 հոգի։ Աւար է առնված մեծ քանակութեամբ տաւար ու հաց։ Անգլիացիներից սպանվել է մէկը եւ վիրաւորվել են չորսը։

ՖԻԼԻՊՊՈՊՕԼ։ Կ. Պոլսի երիտասարդ թիւրքերի կօմիտէը դիմեց Գահիրէ փախած Դամադ Մահմուդ փաշային, առաջարկելով նախաձեռնութիւն ստանձնել ընդհանուր կօնգրես հրաւիրելու դժգոհ երիտասարդ թիւրքերից, հայերից եւ մակեդոնացիներից։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎ։ Դնեպրը սառուցից ազատվեց։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մարտի 3-ին ժողովրդական լուսաւորութեան մինիստր Բոգոլեպովի դագաղի վրա հոգեհանգիստ կատարվեց, որին ներկայ էին Թագաւոր Կայսրը, Թագուհիներ Մարիա Ֆեոդորովնա եւ Ալէքսանդրա Ֆեոդորովնա եւ Թագաժառանգը։—Մարտի 3-ին տանից դուրս բերեցին ծովապետ Պերելեշինի դիակը ներկայութեամբ Թագաւոր Կայսրի, Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆեոդորովնայի, Թագաժառանգի, Մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրովնայի եւ Մեծ Իշխանների։

ԲԵԼԳՐԱԴ։ Կայսերական թատրոնների դերասան Իւժինի ներկայացումները անագին աջողութիւն ունեն այստեղ. ամբողջ մամուլը ոգեւորված կարծիքներ է յայտնում։ Թագաւորը չնորհեց Իւժինին Սավվայի Մեծ Խաչի շքանշանը։

4 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Вѣстникъ Финансовъ» թերթում դուրս եկաւ մի յօդուած «Պատրաստվում է արդեօք Ռուսաստանը առեւտրական դաշնագրութիւններ կապելու» յօդուածի առիթով, որ այնքան աղմուկ էր հանել Գերմանիայում։ Յօդուածը այսպէս է վերջանում. «Իրաքանչիւր տէրութիւն կատարեալ եւ անկորզելի իրաւունք ունի տնօրինել իր ներքին տնտեսական քաղաքականութիւնը այնպէս, ինչպէս ինքը հարկաւոր եւ օգտակար է համարում իր ժողովրդի բարօրութեան համար։ Ռուսաց ֆինանսների մինիստրութիւնը նոյնքան հեռու է այն մտքից, թէ Ռուսաստանը կարող է միջամտել Գերմանիայի ներքին գործերին, որքան եւ այն մտքից, թէ Գերմանիան կարող է միջամտել Ռուսաստանի ներքին գործերին, բայց նա չէ կարող ի նկատի չունենալ այն բանը, որ վերադարձը դէպի տնտեսական անկախութիւնը դժուարութիւն է յարուցանում, երբ մի երկիր ուզում է կապել, եւս աւելի վերանորոգել առեւտրական—սակագնային համաձայնութիւններ, որոնց էութիւնը հէնց նրանումն է կայանում, որ դաշնադրութիւն կապողները զիջում են իրանց անկախութեան մի մասը եւ կապում են իրանց փոխադարձ տնտեսական պարտաւորութիւններով իրանց ընդհանուր շահերի համար։ Հէնց այդ սկզբունքի վրա է հիմնված 1894 թ-ի ռուս-գերմանական առեւտրական դաշնադրութիւնը. նա որոշ հաւասարակշռութիւն հաստատեց երկու դրացի երկիրների տնտեսական յարաբերութիւնների մէջ եւ Ռուսաստանը անկասկած այդ դաշնադրութեան ստեղծած հաւասարակշիռ դրութիւնը կընդունի իբր ելակէտ նրա վերանորոգման վերաբերեալ բանակցութիւնների ժամանակ, եթէ այդպիսի բանակցութիւններ տեղի ունենան։ Ռուս ժողովրդի աշխատանքի հիմնական արդիւնքի վրա բարձրացրած մաքս դրվելով՝ արժատապէս փոխվում են 1894 թ-ի դաշնագրական պայմանները. ամեն մի ինքնագլուխ տնտեսական գործողութիւն Գերմանիայի կողմից, որ ձգտի փոփոխել գոյութիւն ունեցող հաւասարակշռութիւնը, համապատասխան գործողութիւն առաջ կը բերի Ռուսաստանի կողմից։ Ամեն մի աւելորդ ծանրոյք,—լինի դա մաքսի աւելացման թէ ներմուծման ճնշման ձեւով,—որ դրվելու լինի Գերմանիայի կողմից նրա կշեռքի նժարի մէջ մեզ հետ ունեցած առեւտրական փոխանակութեան շրջանում, կը ստիպի Ռուսաստանին էլ նոյնպիսի ծանրոյք դնել կշեռքի այն նժարի մէջ, որ իրան է պատկանում։ Ռուսաստանը ստիպված կը լինի այդ անել ոչ թէ ռազմական հակումներից դրդված, ոչ թէ հակառակորդին խոցել ուզելով, այլ միմիայն այն նպատակով, որ կշեռքը պահպանվի հաւասարակշիռ դրութեան մէջ։ Այդպիսի լրացուցիչ ծանրութեան չափը որոշելիս Ռուսաստանը ելակէտ կունենայ, ի միջի այլոց, հետեւեալ նկատումները. 1) Անհրաժեշտութիւնը աւելի իրական պաշտպանութիւն ցոյց տալու հայրենի արդիւնագործութեան այն ճիւղերին, որոնք կարիք ունեն պաշտպանվելու կամ որոնց պաշտպանութիւնը թուլացրած էր չնորհիւ Գերմանիային արված այն սակագնային զիջումների, որոնց պահպանելը այսուհետեւ այլ եւս չէ կարող արդարանալ մեր դէպի այդ երկիրը արտահանվող արդիւնագործութեան համապատասխան շահով, եւ 2) անհրաժեշտութիւնը ռուսական արտահանման համար հատուցումներ գտնել այն վնասի համար, որ կը հասնի նրան գերմանական տնտեսական քաղաքականութեան նոր ուղղութեան չնորհիւ։ Այդ հատուցումները կարող են գտնվել ուրիշ երկիրների հետ ունեցած առեւտրական յարաբերութիւնների մէջ, երկիրների, որոնք հնարաւոր կը գտնեն Ռուսաստանին առաւելութիւններ չնորհել ռուսական ապրանքների ներմուծման նըկատմամբ եւ դրանով իրաւունք կը ստանան համապատասխան առաւելութիւններ ստանալ իրանց ապրանքները Ռուսաստան ներմուծելու համար։

Բարձրագոյն հրաման է հրատարակված Անդրկասպեան երկիրը Վրաստանի թեմից հանելու եւ Թուրքեստանի թեմի մէջ մտցնելու մասին։

ՊԱՐԻԶ։ «Figaro»-ի խմբագիր Կաստէլանի հետ ունեցած մենամարտում դը Ռոզէ գնդապի վերք ստացաւ աջ ազդրին։

ԼՕՆԴՕՆ։ Կիտչենէրի Պրէտորիայից ուղարկած հեռագրով հաղորդվում է եւ այն, թէ գնդապետ Պարկերի զօրաբաժինը Լէյդենբուրգից բերեց իր հետ Էրազմուսին ու նրա ընտանիքը։

ՊՕՐՏՍՄՈՒԹ։ Կօրնուէլի եւ Եօրկի դուքսը եւ դքսուհին այսօր չոգենաւով ճանապարհ ընկան դէպի գաղութները։

5 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մարտի 4-ին Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆեոդորովնան ուղեւորվեց Դանիա։

Մարտի 4-ին Թագաւոր Կայսրը, Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆեոդորովնան, Թագաժառանգը եւ Մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրովնան տեղափոխվեցին բնակելու Ցարսկոյե Սելո։

Մեծ Իշխանուհի Մարիա Պաւլովնան եւ Մեծ Իշխանուհի Ելենա Վլադիմիրովնան մարտի 4-ին ուղեւորվեցին արտասահման։

Զերնիգովից, Օդեսայից, Աստրախանից, Վլադիմիրից եւ Կիեւից հեռագիրներ են ստացված ժողովրդական լուսաւորութեան մինիստր Բոգոլեպովի համար կատարված հոգեհանգիստների մասին։

ՊԵԿԻՆ։ Օտարազգի դեսպանների ժողովում նորից քննութեան ենթարկվեց գաւառական աստիճանաւորներին պատժելու հարցը. ռուսաց դեսպանը վճռական կերպով հակառակեց մահվան պատժի վերաբերեալ որ եւ է պահանջին։

ԳՐՕԴՆՕ։ Նեման գետը ազատվեց սառուցից։

ՎԻԵՆՆԱ։ Ռուսաց դեսպանը ճաշկերոյթ տուեց, որին ներկայ էր, ի միջի այլոց, արտաքին գործերի մինիստր Գոլուխովսկիյ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
(Ժամերը Պետերբուրգի հաշւով)
տարբերութիւնը 58 րոպէ։

№ 5 գնացքը։

Բաղուից դուրս է գալիս	ցեր.	3 ժ.	5 ր.
Թիֆլիս է հասնում	առ.	8 »	23 »
Թիֆլիսից դուրս է գալիս	»	9 »	3 »
Բաթում է հասնում	եր.	9 »	11 »

№ 3 գնացքը։

դիշ.	11 ժ.	15 ր.
եր.	5 »	35 »
եր.	6 »	30 »
առ.	7 »	10 »

№ 6 գնացքը։

Բաթումից դուրս է գալիս	առ.	8 ժ.	56 ր.
Թիֆլիս է հասնում	եր.	8 »	42 »
Թիֆլիսից դուրս է գալիս	»	9 »	22 »
Բաղու է հասնում	ցեր.	1 »	25 «

№ 4 գնացքը։

եր.	10 ժ.	47 ր.
առ.	11 »	18 »
»	12 »	36 »
»	7 »	— »

արագ գնացք

Շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը.

Թիֆլիսից դուրս է գալիս	առաւ.	7 ժ.	56 ր.
Բաղու է հասնում	երեկ.	9 »	— »
Բաղուից դուրս է գալիս	առաւ.	6 »	50 »
Թիֆլիս է հասնում	երեկ.	8 »	12 »

—

Թիֆլիսից դէպի Կարս դուրս է գալիս	երեկ.	10 ժ.	—
Ալէքսանդրոպոլ հասնում է	առ.	8 »	27 ր.
Կարս հասնում է	ցեր.	12 »	23 »
Կարսից դուրս է գալիս	ցեր.	4 »	12 »
Ալէքսանդրոպոլ հասնում է	երեկ.	7 »	40 »
Թիֆլիս հասնում է	առ.	6 »	15 »

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻԻԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա. Վօրոնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վենէրական (սիֆիլիս) և մեզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Զիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Ն. Ի. Գզելիեվ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ն. Ն. Ռոսոմբէկով—5—6 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.
Ա. Ն. Շպակովսկի—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժութիւն), և վենէր. հ.
Գ. Ա. Թուխանով—7—8 ժ. ներքին և երեխայոց հ.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.
Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Ց. Առվանիսյանի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։
Հիանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ՏԱՓԻ-ԹԱՂԻ (Քամոյեանց) ս. Գէորգ եկեղեցու գաւթումը ծախվում է գործածութեան մէջ եղած Վրաստանի հին ագուռ։ 1—3

Տպագրվում է
ԲԱԴՐԱՏ ԱՅՎԱԶԵԱՆՑԻ
ՀԻՍԻՍԻ ԱՐԾԻՒԸ
Պատմական վէպ

Բովանդակութիւն. Հառաչանքի եւ տանջանքի աշխարհը.—Փախստականներ. — Ասլան.—Սրտի մէջ կայծեր.—Ներսէս սրբազանը.—Վշտի արձագանքը.—Կենդանի ընծան.—Հայ ընտանիք.—Գտաւ.—Խաչեցէք նրան.—Կրակի միջից.—Կռուիը.—Փախուստ.—Խաչ եւ սուր.—Ձիւնի մէջ.—Գնչուհի.—Բանակում.—Պարսիկների բանակում.—Անուրջք.—Կեանքից էլ թանգ.—Ռուսներն Էջմիածնում.—Էջմիածնի պաշարումը.—Աշտարակի պատերազմը.—Ռմբաձիգ Ցակոբը.—Նահատակներ։—Արիւնոտ դաշտ.—Պատմական անցքերից.—Տիփը.— Գաղանութիւն. — Թնդանօթի բերանում.—Երեւանի առումը.—Արտասուքների պսակը.—Հիւսիսի Արծիւը։

Գինն է մինչեւ լոյս տեսնելը մէկ րուբլի։ Դիմել՝ Тифлисъ, Дворянская улица № 6. Баграту Айвазянцу. 1—3

Ընկերութիւն
ԲՐՕԿԱՐ եւ ԸՆԿ.
յանձնարարում է
անուշահոտ
„ԶՐԱՅԻՆ
ՇՈՒՇԱՆ“
Զօրեղ եւ հաճելի բուրմունք
ԾԱՂԿԵԱՑ Օ-ԴԸ-ԿՕԼՕՆ
ՕԾԱՆԵԼԻՔ
ՍԱՊՈՆ
ՊՈԻԴՐԱ
№ 104055 (25) 1—10

ГАРМОНІИ

Высылаю во всѣ города Россіи какъ своей фабрики, такъ и кустарнаго производства, по самымъ умѣреннымъ цѣнамъ, цѣною отъ 30 коп. до 10 руб. При требованіи прилагать 20 р. задатокъ. Требованіе на сумму менѣе 25 руб. не исполняется. Адресъ: Тула, Веневская улица, магазинъ В. Д. Грецова.

Съ совершеннымъ почтеніемъ
1—10 В. ГРЕЦОВЪ

Լոյս տեսան
1. Ո՞Վ Է ՑԱՆՑԱՒՈՐԸ . . . . . 15 կ.
2. ԱՌԱՋԻՆ ՀՈԳԻՆ ԱՌԱՋԻՆ ՄԱՐՄՆԻ ՄԷՋ. . . 10 կ.

Ճանապարհածախս իւրաքանչիւրին 3 կոպէկ։ Արդիւնքը յատկացվում է Ախալցխայում հիմնվելիք աշխատանոցի օգտին։ Դիմել՝ Петербургъ, Владимірскій, 3 кв. 8. Д-ру А. С. Кечегьяну. 4—6

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլտուութեամբ։ Մեծ արկղիկը 5 բուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ
ժանգը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց
ԶՈՒԻ ԿԱԹԸ
երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մուները, տալիս է կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 բուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Մատակարարվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Սբ. Անանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բաղուում. նաև Միքայելեան կամուրջի վրա, Պապովի և Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պօստով։
72—100

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ ԱՐԻԻԼԵԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

«ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԴԱՆԻԷԼ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ ՔԱՆԱՆԵԱՆԻ ՄՐՑԱՆԱԿԻ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ 7-րորդ յօդուածի հիմամբ, Լազարեան Ճեմարանի մասնագիտական դասարանների խորհուրդը իր նոյեմբերի 13-ին կայացած նիստում վճռեց յայտարարել ի գիտութիւն մասնագէտների առաջիկայ երկու նիւթերը՝ երկու մրցանակի համար՝ իւրաքանչիւրը 600 բուբլի։

Ա.—«Կազմել բառարան գրաբարում չը պահպանված դաւառական հայերէն բառերի, նշանակելով ամեն անգամ՝ թէ յատկապէս որ դաւառականումն են նրանք գործածական եւ որոշելով նրանց նշանակութիւնը ռուսերէն կամ մի ուրիշ եւրոպական որ եւ է լեզուով»։

Բ.—«Հաւաքումն եւ դասաւորութիւն Արաբացի մատենագիրների հաղորդած տեղեկութիւնների հայաստանի եւ հայերի մասին՝ մինչեւ ԺԴ. դարու վերջը՝ ներկայացրած նիւթերի քննական բացատրութեամբ հանդերձ»։

Շարադրութիւնները կարող են ներկայացվել հայերէն կամ ռուսերէն, ֆրանսերէն կամ գերմաներէն։

Լաւագոյն շարադրութիւնը յիշեալ իւրաքանչիւր նիւթերից մէկի մասին կը պարգեւատրվի խորհրդի կողմից վեց հարիւր (600) բուբլի մրցանակով։

Եթէ առաջին կամ երկրորդ նիւթի մասին ներկայացրած շարադրութիւններից երկուսը հաւասար արժանաւորութիւն ունենան, խորհուրդը կարող է բաժանել մրցանակը երկուսի հեղինակների մէջ։

Շարադրութիւնները պէտք է ներկայացվեն ոչ ուշ քան 13-ն նոյեմբերի 1902 թ-ի։
1—3

Թիֆլիսի Կենտրոնական գրավաճառանոցում
ծախվում են հետեւեալ հայերէն նոր գրքերը՝

Ալխազեանց Ա. սարկ., Համառօտ ձեռնարկ ծաղկահատութեան կամ ծաղկի պատուաստման, Թիֆլիս, 1901 թ. 5 կոպ.։
Ահարոնեան Ա., Պատկերներ, Մոսկվա, 1900 թ. 1 ր.։
Աղանեան Գ. ա. քահ., Լումայ, գրական հանդէս, վեցերորդ տարի, գ. ա. 1901 թ. փետր. Թիֆ. գ. 2 ր.։
Զահրիեանց Ս., Պոլի-Բէգ (Քեօռ-օղլու հէքիաթներից մէկը), Ալէքս. 1900 թ. 35 կ.։
Լալայեանց Ե., Գանձակի գաւառ, հատ. ա., Թիֆլ. 1901 թ. 80 կ.։
Կորոլենկո Վ., Կոյր երաժիշտ (էտիւդ), Թիֆլ. 1901 թ. 60 կ.։
Ճանիկեան Ց., Դժոխք (բարոյական) հատ. բ., մ. բ., Թիֆլիս 1900 թ. 30 կ.։
Էօժէն-Սիւ, Թափառական հրէայ, 4 հատոր (հազուագիւտ), կ. Պոլիս, գ. 10 ր., կազմած 10 ր. 80 կոպ.։
Վորոնովա Ի., Մադնիս («Նուէր մանուկներին» սէրիայից), Թիֆլ. 1901 թ. 12 կ.։
Տաղավարեան Ն. Բժ., Դարվինականութիւն, Պոլիս, 1901 թ. 30 կ.։
Որբունի կամ պատկերազարդ բացատրիկ Բազմավէպ, Վենետիկ, 1900 թ. գ. 1 ր.։
Զէյթունցի, Զէյթունի անցեալէն եւ ներկայէն ա. մ. Վիէննա 1900 թ. գ. 1 ր. 50 կ.։
Սաղմոս՝ մեծագիր, Պոլիս, գ. 60 կ.։
» փոքրագիր. Պոլիս, 1 ր.։
» թաւիշով պատած եւ ոսկեզօծ, Պոլիս, 2 ր.։
Պարտէզ հոգեւոր՝ թաւիշով պատած եւ ոսկեզօծ, Պոլիս, 2 ր.։
Մելիքսէթեան Մ., Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառս արեւելեան Տաճկաստանի, Պոլիս, գ. 3 ր.։

Դիմել՝ Тифлисъ, Въ Центральную Книжную Торговлю. (ե.) 1—5

Дозволено цензурою, Тифлисъ, 5 Марта 1901 г.
Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27